



## Լաբորատոր աշխատանք

### ՍԵՐՄԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

**Աշխատանքի նպատակը:** Ուսումնասիրել լոբու և ցորենի սերմերի կառուցվածքը, դիտել սաղմի մասերը:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ: Լոբու և ցորենի սերմեր, ունելի, նշտար, ջուր, խոշորացույց:

**Աշխատանքի ընթացքը:** Դիտենք լոբուու ցորենի չոր և ուռած սերմերը և համեմատենք: Լոբու սերմ-նամաշի գոգավոր մասում կնկատեք սերմնասպին և սերմնամուտքը: Լոբու սերմը ուռուցիկ կողմից կտրեք երկայնակի ուղղությամբ և առանձնացրեք սերմնամաշկը: Կտրվածքի վրա խոշորացույցով դիտեք սաղմը, գտեք երկու խոշոր շաքիլները, սաղմնային ցողունիկը, արմատիկը, բողբոջիկը և սաղմնային տերևիկները:

Փորձեք առանձնացնել ցորենի ուռած հատիկի պտղաթաղանթը, համեմատեք լոբու սերմնամաշկի հետ: Կտարեք երկայնակի կտրվածք, կտրվածքի վրա խոշորացույցով դիտեք էնդոսպերմը, որը զբաղեցնում է սերմի մեծ մասը, սաղմը և սաղմի մասերը՝ սաղմնային արմատիկը, ցողունիկը, բողբոջիկը, շաքիլը:

Նշեք լոբու և ցորենի սերմերի կառուցվածքի ընդհանուր և առանձնահատուկ գծերը: Տեսրում նկարեք լոբու և ցորենի սերմերը. ցույց տվեք նրանց մասերը:



